Արձանագրություն N 4

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերը գնահատելու նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.05.2018 թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սողոմոնյան - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ

Անդամներ՝

Կ. Սիմոնյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Ավալյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Գ. Մոմջյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող՝

Ն. Կարապետյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ:

Բացակայում էր՝

Ա. Նալբանդյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

1. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը գնահատելու մասին

(Ա.Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ «Կրեդո-14» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Ֆինանսական միջոցներ» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշների գծով առկա անհամապատասխանությունները չեն շտկվել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 «Կրեդո-14» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ֆինանսական **միջոցներ**» որակավորման չափանիշը գնահատել անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

1.2 Կրեդո-14» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական **փորձառություն**» որակավորման չափանիշը գնահատել անբավարար:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ լիազորված մարմին ուղարկել «Կրեդո-14» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

1.4 Փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Ավալյան
		Գ. Մոմջյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան

Արձանագրություն N 3

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.05.2018 թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սողոմոնյան - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ

Անդամներ՝

Կ. Սիմոնյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Ավալյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Գ. Մոմջյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

Քարտուղար՝

Ն. Կարապետյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման հարցերով փորձագետ:

Բացակայում էր

Ա. Նալբանդյան - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացրած հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա.Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ

11 «ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված" Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից «Կրեդո-14» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - *0:*

12 «Կրեդո-14» ՍՊԸ-ին **«armeps.am»** էլեկտրոնային համակարգով ոչ ավտոմատ եղանակով ծանուցում էր ուղարկվել առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

1.3 Սահմանված ժամկետում մասնակիցի կողմից ստացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

1.4 «Կրեդո-14» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն. Մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում է նախկինում կատարված պայմանագրերի հաշիվ ապրանքնագրերի պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

1.5 «Կրեդո-14» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում **«Ֆինանսական միջոցներ»** որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն: Մասնավորապես, համաձայն հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.4 ենթակետի 3-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Մինչդեռ «Կրեդո-14» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը (4 700 000 ՀՀ դրամ) համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտեի կողմից ստացված եզրակացության՝ գերազանցում է մասնակցի, հայտը ներկայացնելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, որը կազմում է 1 733 840 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

1.6 «Կրեդո-14» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը **«Աշխատանքնային ռեսուրսներ»** որակավորման չափանիշի գծով համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց.

1.7 Կասեցնել «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատելու նիստը և հիմք ընդունելով ՀՀ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 47-րդ կետը՝ ծանուցել «Կրեդո-14» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրության 1.4 և 1.5 կետերում նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Ավալյան
		Գ. Մոմջյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան